ՍՓՅՈՒՌՔՈՒՄ

ԲՈՒԼՂԱՐԱՀԱՅ ԿՅԱՆՔ

Ն. Ս. ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա. ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԴԱՐՁԸ

Ամենայն Հայոց Վեհափառ կաթողիկոս Տ. Տ. Վազգեն Ա-ի ընտրության և գահակալության ութերորդ տարեդարձը արժանի շուքով նշվեցավ մեր գաղութին մեջ:

Այս առթիվ 6 հոկտեմբեր 1963-ի կիրակի օր հանդիսավոր պատարագ և գոհաբանական մաղթանք կատարվեցան Սոֆիայի Ս. Աստվածածին եկեղեցվո մեջ: Պատարագի արարողությունները կատարվեցան ներդաշնակ կերպով, ղեկավարությամբ եկեղեցվո երկարամյա դպիր տիրացու Կարապետ Փափալյանի, որ իր գեղեցիկ ձայնով մասնակցեցավ նաև մեներգներուն:

Եկեղեցվո հովիվ արժանապատիվ Տ. Վահան ավագ քահանա Փափալյան իր քարոզին մեջ վեր հանեց Վեհափառ Հայրապետի եկեղեցաշեն և ազգաշեն թանկագին ծառայությունները, որոնց շնորհիվ բազմադարյան Հայաստանյայց Եկեղեցին կապրի իր նոր վերածնունդը: Տեր հայրը աղոթեց առ Բարձրյալն Աստված և հավատացյալներու բազմությունը հրավիրեց միանալ իրեն, որ Հայ Եկեղեցվո արժանընտիր Պետին շնորհե երկար արևշատություն՝ ի պայծառություն առաքելահիմն մեր Եկեղեցվո, հանսասանություն լուսավորչահիմն Մայր Աթոռի և ի բարգավաճումն հայրենիքի:

Եկեղեցվո ավարտումեն հետո, թեմական խորհուրդի կողմե ընդունելություն տեղի ունեցավ ի պատիվ Վեհափառ Հայրապետի գահակալության տարեդարձին: Ներկա էին եկեղեցվո հովիվը, թեմական խորհուրդի անդամները՝ գլխավորությամբ փոխ-ատենապետ Հ. Պալյանի, եկեղեցական վարչության անդամները, սարկավագներ, դպիրներ և հրավիրյալներ:

Այստեղ ալ բաժակ առաջարկվեցավ Մայր Աթոռի արժանընտիր Գահակալին ի պատիվ, որպեսզի Ան շարունակե Իր խաղաղասիրական, եկեղեցասիրական և հայրենասիրական շինիչ գործունեությունը:

Թեմական խորհուրդը, հանուն թեմի եկեղեցական մարմիններուն և հավատացյալներուն, շնորհավորական հեռագիր հղեց Նորին Սուրբ Օծություն Վեհափառ Հայրապետին:

ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՅԻ ԾՆՆԴՅԱՆ 250-ԱՄՅԱԿԸ

Հայ մեծ բանաստեղծ-երգիչ Սայաթ-Նովայի ծննդյան 250-ամյակը պիտի տոնվի նաև Բուլղար Ժողովրդական Հանրապետության մեջ, նախաձեռնությամբ Խաղաղության պաշտպանության բուլղարական ազգային կոմիտեին, Բուլղար-սովետական բարեկամության համաժողովրդական կոմիտեին, Բուլղար գրողներու միության և բուլղարահայ «Երևան» մշակութային միության: Այս առթիվ ամիսներ առաջ կազմված մասնավոր հանձնախումբը տենդագին գործունեության լծված է՝ արժանի կերպով նշելու տոնը:

Անմահ երգչի կյանքն ու գործը ծանոթացնելու համար գրություններ լույս կտեսնեն մամուլին մեջ: Սոֆիայի մեջ հանդիսությունը տեղի պիտի ունենա 2 նոյեմբեր 1963-ին, Բուլղար-սովետական բարեկամության տան մեջ: Պիտի վեկուցանե բուլղար հայտնի բանաստեղծ Լամար, որ մոտերս այցելած էր Սովետական Հայաստան և վերադարձավ խանդավառ տպավորություններով:

Հանդիսություններ տեղի պիտի ունենան նաև հայաշատ քաղաքներու մեջ: Տոնակատարությունը կխոստանա վերածվիլ ժողովուրդներու բարեկամության վառ ցույցի, որուն նվիրած է մեծ բանաստեղծը իր ամբողջ կյանքը, դառնալով կովկասյան ժողովուրդներու եղբայրության դրոշը:

ԹՂԹԱԿԻՑ